

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԵՊՀ դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ susannagrigoryan@ysu.am

ՊԱՐՈՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ԵՊՀ դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ nairaparonyan@ysu.am

Միջին հայերենի բառապաշարը, հարուստ լինելով նեղ բարբառային բառերով, իր զարգացման ընթացքում մշտապես համալրվել և հարստացել է նաև փոխառություններով՝ արտացոլելով հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները: Շնորհիվ այլ ժողովուրդների հետ հայ ժողովրդի մշակութային, քաղաքական և առևտրային հարաբերությունների՝ այս ժամանակաշրջանը հարստացել է բազմապիսի երևույթների վերաբերող փոխառություններով, որոնք, թափանցելով գրական լեզվի և բարբառների միջոցով, ամրացել են մեր լեզվում:

Այս հոդվածի նպատակն է Կ. Երզնկացու կողմից գործածված փոխառությունների ուսումնասիրությունը, դրանց գործածության և իմաստային առանձնահատկությունների վերհանումը: Կ. Երզնկացու լեզվում գործածվող փոխառությունները վերաբերում են ամենափայլուն ոլորտների: Քննությունը ցույց տվեց, որ մեր ընտանիքում քանակով գերազանցում են հայկանիշ, դրություն, վիճակ, մարդկային հարաբերություններ արտահայտող փոխառյալ բառերն ու բաղադրիչները: Յուրաքանչյուր հեղինակ իր սպեղծագործության մեջ ներկայացնում է լեզվի պարմական զարգացման տվյալ շրջանի վիճակը: Այս իմաստով Կ. Երզնկացու բանաստեղծությունը մի ամբողջ քայլ առաջ էր միջնադարյան գրականության բնագավառում: Նրա տաղերի լեզուն հարուստ է դարեր շարունակ հայերենում գործածվող զանազան ոլորտների վերաբերող փոխառություններով, որոնցից շատերը արձագանքն են իր ժամանակաշրջանի հայոց մտածողության և անդրադարձումը լեզվական իրողությունների: Վստահաբար կարելի է ասել, որ փոխառությունների այսքան առատ դրսևորումները, ժողովրդախոսակցական բառաձևերի գործածությունը հեղինակի տաղերի յուրահատուկ առանձնահատկությունն են:

Բանալի բառեր՝ Կ.Երզնկացի, բնության և սիրո տաղերգու, փոխառություններ, փոխաբերություններ, իմաստային խմբեր, բառապաշար, բաղադրիչ, միջին հայերեն, գրական լեզու, բարբառներ:

Միջնադարյան տաղերգությունը, որ խորապես հարազատ է ժողովրդական երգերին՝ խաղիկներին, հայրեններին, կարևոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմության համար: Միջին հայերենի բառապաշարը, հարուստ լինելով նեղ բարբառային բառերով, իր զարգացման ընթացքում մշտապես համալրվել և հարստացել է նաև փոխառություններով՝ արտացոլելով հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները: Շնորհիվ այլ ժողովուրդների հետ հայ ժողովրդի մշակութային, քաղաքական և առևտրային հարաբերությունների՝ այս ժամանակաշրջանը հարստացել է բազմապիսի երևույթների վերաբերող փոխառություններով, որոնք, թափանցելով գրական լեզվի և բարբառների միջով, ամրացել են մեր լեզվում:

Սույն հոդվածի նպատակն է Կոստանդին Երզնկացու կողմից գործածված փոխառությունների ուսումնասիրությունը, դրանց գործածությունը և իմաստային առանձնահատկությունների վերհանումը:

Կ. Երզնկացու կյանքի և գործունեության մասին հիմնական տեղեկություններ տալիս են նրա ստեղծագործությունները: Ամենայն հավանականությամբ նա ծնվել է 1250-ական թվականներին Երզնկայում, որն այդ ժամանակի զարգացած քաղաքներից մեկն էր, և որով անցնող օտար ճանապարհորդները մեծ գովեստով են խոսել այս փարթամ, շեն ու մարդաշատ վայրի մասին: Երզնկացին կրթություն ստացել է Երզնկայի մոտ գտնվող Լուսավորչի լեռան վրայի վանքերից մեկում՝ աշակերտելով վարդապետների: Նրա քրիստոնեական քարոզներից երևում է, որ հավանաբար նա եղել է կրոնավոր, իսկ կյանքի վերջում՝ մենակյաց ճգնավոր, քանի որ հալածվել է շրջապատի տգետ, նենգ ու չարամիտ մարդկանցից: Ենթադրվում է, որ չի ունեցել ընտանիք և հարազատներ:

Կ. Երզնկացու տաղերն առաջին անգամ լույս են տեսել «Բազմավեպ»-ում 1848 թվականին: Նրան բարձր է գնահատել և նրա մասին առաջին անգամ իր խոսքն է ասել Արշակ Չոպանյանը: 1905 թվականին Երզնկացու տաղերի առաջին հրատարակությունն իրականացրեց Մ. Պոտուրյանը¹: Կ. Երզնկացու ստեղծագործությանը մանրամասն անդրադարձել է Մ. Աբեղյանը՝ նշելով, որ նա յուրացրել է Նարեկացու այն տաղասացությունը, որ հոգևոր իմաստով, անձնական

¹ Մ. Պոտուրյան, Կոստանդին Երզնկացի ԺԴ դարու բանաստեղծ և յուր քերթվածները, Վենետիկ, 1905:

շեշտերով երգում է ուրախ, լուսավառ բնությունը: Նա բնությունից առնում է ընդհանրապես մեղմ ու քնքուշ տեսարանները. ներբողում է արեգակի ծագում, գարնան գալուստ, լույս ու սեր՝ հորինելով մեկը մյուսից գեղեցիկ քերթվածներ¹:

Ավելի ուշ՝ 1953թ., Կոստանդինի կյանքին ու ստեղծագործությանն է անդրադարձել Հարություն Քյուրտյանը: 1962 թվականին լույս տեսավ Կոստանդին Երզնկացի, Տաղեր (աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի) աշխատությունը, որում նկատի են առնվել հեղինակի գործերի թե՛ ձեռագիր, թե՛ տպագիր աղբյուրները, հետազոտություններն ու հրատարակությունները: Այս աշխատությունը բաղկացած է երեք մասից՝ 1. Ուսումնասիրություն, 2. Բնագրեր, 3. Ծանոթագրություններ: Առաջին մասում Ա. Սրապյանը ներկայացնում է Կ. Երզնկացու ապրած ժամանակաշրջանը, կյանքն ու գործը: Երկրորդ բաժնում զետեղված են բնագրերը, որոնք կազմվել են Երևանի Մատենադարանի ձեռագրերի և Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի տաղարանի, ինչպես նաև Մ. Պոտուրյանի հրատարակած տաղարանի հիման վրա: Կ. Երզնկացու գործերից մի քանիսը ֆրանսերեն է թարգմանել Արշակ Չոպանյանը, ապա ռուսերեն է թարգմանել Վ. Բրյուսովը, ով հեղինակի միայն «Մեծ գոհութիւն հարիւր հազար» սկզբնատողով տաղը նկատի ունենալով՝ գրում է. «Լեզվի և հորինվածքի ուժգնությամբ ու թափով պոեմը պատիվ կբերեր այն ժամանակվա Արևմտյան Եվրոպայի ամեն մի գրականության. և Եվրոպան նույնիսկ ոչինչ չուներ նրան հակադրելու: Իսկ իր մեջ թափանցած ոգով ու իր բոլոր մասերով պոեմը պատկանում է վերածննդի մեծ հոսանքին»²: Կ. Երզնկացին թարգմանվել է նաև բուլղարերեն:

Կ. Երզնկացին բնության և սիրո առաջին տաղերգուն է, որ «բանաստեղծական խոսքի անկրկնելի վարպետությամբ ու զգացողությամբ երգում է աշխարհը՝ ծառ ու ծաղիկ, վարդ ու բլբուլ, լույս ու արև, սեր և ուրախություն, կին և գինի: Նրա տաղերը հայ միջնադարյան աշխարհիկ պոեզիայի գարունն են, այն գարունը, որ լիովին մտնում է իր իրավունքների մեջ և ողջ բնությունը ողողում լույսով ու արևով, երփներանգ գույներով, հորդառատ ջրերով, զգլխիչ բույրով ու թովչանքով: Կարծես գարունն ինքն է ներխուժում Կոստանդինի տաղերի մեջ և նրա տողերի միջով երևում է իր ամբողջ գեղեցկությամբ, հմայքով ու կենսավիությամբ»³:

Կ. Երզնկացու տաղերի լեզուն հարուստ է դարերով հայերենում գործառող, ինչպես նաև ժամանակի խոսակցական լեզվում կիրառվող բազմաթիվ փոխառություններով, որոնք վերաբերում են ամենատարբեր բնագավառների՝

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Եր., 1960, էջ 360:

² Брюсов В., Поэзия Армении, Москва, 1916, էջ 50:

³ Կ. Երզնկացի, Տաղեր, Եր., 1962, էջ 34-35:

միջբարբառային ժողովրդախոսակցական լեզվի կենդանի, ճկուն հնարավորությունների օգտագործումով:

Մենք առանձնացրել ենք Կ. Երզնկացու բանաստեղծություններում գործածված փոխառությունները՝ ընդգրկելով Ա. Սրապյանի աշխատասիրությանը կազմված գրքում եղած բոլոր տաղերը: Թեմատիկ առումով տաղերը գրքի հեղինակը բաժանում են հինգ խմբի՝ բնության, սիրո, անձնական-հասարակական, խոհախրատական, կրոնական: Փոխառյալ բառերի բացատրությունների և դրանց համեմատությունների, նրանց ծագման աղբյուրի ներկայացման համար հիմնականում հիմք են ծառայել մի քանի հայտնի բառարաններ¹, ինչպես նաև Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» (Եր., 1951, մաս 2), Ռ. Ղազարյանի «Միջին գրական հայերենի բառապաշարը» (Եր., 2001) աշխատությունները:

Ստորև ներկայացնում ենք Կ. Երզնկացու տաղերում գործածված փոխառությունները իմաստային-թեմատիկ խմբավորումներով՝ փոխատու լեզուներից համապատասխան բնագրային օրինակների արձանագրումով²: Իհարկե, բազմաթիվ փոխառությունների՝ հատկապես արաբերենից, պարսկերենից և թուրքերենից փոխառյալ բառերի փոխանցման աղբյուրը բառարաններում հաճախ ստույգ նշված չէ, քանի որ երբեմն դժվար է որոշել, թե որ լեզուն է հանդիսացել փոխառության աղբյուր կամ միջնորդ: Մեր ընտրանքում քանակով գերազանցում են հատկանիշ, դրություն, վիճակ, մարդկային հարաբերություններ արտահայտող բառերը: Առանձնացրել ենք հեղինակի գործածած փոխառությունների հետևյալ իմաստային խմբերը³.

ա) **Ֆիզիկական աշխարհ, բնություն՝ *բահար*** (պարսկ.)՝ գարուն: Ձըմեռն բանդ էր եւ խաւար, // Գարուն էհաս ու նոր *բահար* (117): **Մաղրիպ** (արաբ.,

¹ Գ. Աւետիքեան, Հ. Սիրմելեան, Մ. Աւգերեան, Նոր հայկազեան բառարան (ՆՀԲ), հ. 1, Եր., 1979, հ. 2, Եր., 1981: Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (ՄՀԲ), Եր., 2009: Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Եր., 1926: Սահակ վարդապետ Ամատունի, Հայոց բառ ու բան, Եր., 1912: Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան (ՀԲԲ), Եր., 1944 (նշված բառարանների հրատարակության վայրը և տարեթիվն այսուհետև փակագծում չեն նշվի):

² Փոխառյալ բառերի իմաստային խմբերի բաժանման համար մենք հիմք ենք ընդունել Ռ. Ղազարյանի «Միջին գրական հայերենի բառապաշարը» (Եր., 2001) գրքում հեղինակի առանձնացրած խմբավորումները՝ մեր կողմից կատարելով որոշ փոփոխություններ: Խմբավորումներում չեն նշվում հին փոխառությունները, որոնք արձանագրված են գրաբարի բառարաններում և համագործածական են նաև գրաբարի համար՝ *խիկար, մաղաս, ճար, ճարակ* և այլն:

³ Փոխառությունների բնագրային օրինակները բերել ենք այբբենական կարգով, սակայն իմաստային միևնույն խմբին պատկանող մեկից ավելի փոխառություններն ընդգրկող տողերը չկրկնելու նպատակով երբեմն խախտել ենք այբբենական կարգը:

պարսկ.)՝ արևմուտք, արևմտյան: Կամ *մադրիպի* ոսկին, որ մահաքովըն դալպ լինի (196): **Նուր** (արաբ., պարսկ.)՝ լույս, շող: Քո սէրդ իմ սրտիս զերդ հուր, // Քո տեսդ աչերուս իմ *նուր* (158): **Չահ//չէհ** (պարսկ.)՝ հոր, փոս, գութ: Ու փոքր ու... զընդան 'ւ *չահ*, // Տանի զամէն մարդ, յիւ մուրատէն գերի (210-211): **Պաղչայ//բաղչայ** (պարսկ.)՝ պարտեզ: Ծաղկունքն գան եւ ժողովին // Ի բուրաստանք 'ւ ի *բաղչանին* (119): **Պապրել** (արաբ., պրսկ.)՝ լրել, բոլորել, լրում առնել. **պապր**՝ լիալուսին: Լուսին սուրաթով լուս ես, *պապրես* ու թամամ ելնես (160): **Շամս** (արաբ.)՝ արեգակ: Աստղըն զօհալ եւ մուշտարի, // *Շամս* ու դամար իմ թաճըս դու (135):

Բ) **Բուսական, կենդանական աշխարհ՝ սոսան//սոսամբ** (թուրք.)՝ ծաղկի տեսակ: Յղըրկէ՛, ձենէ՛ *զսոսան* ծաղիկն եւ հետ նորա զնարկիզնին (139): **Բլբուլ//պլպուլ** (պարսկ., թուրք.)՝ սոխակ: Ուրախացաւ *բլբուլն* ի նա (121): **Ղումրի** (պարսկ.)՝ տատրակ: *Ղումրին* երգէ մեզ եղանակ (135):

Գ) **Տարբեր իրեր, զարդեր, հագուստ, զենքեր, սնունդ՝ ալամ//յալամ** (արաբ.)՝ դրոշ: **Տապլ** (պարսկ., արաբ.)՝ թմբուկ: Շատոց խափանի յարտ ու *տապլ* ու *յալամ* (212): **Աթլաս** (արաբ.)՝ մետաքսյա նուրբ գործվածք, զգեստ: **Ղրմզի//խրմզի** (արաբ., պարսկ., թուրք.)՝ կարմիր մետաքսե կտոր, թավիշ: Ու էհան զկանաչ կապայն // Հագաւ *զաթլասն* եւ *զղրմզին* (140): **Գուրգ** (պարսկ.)՝ լախտ: Խաղին թուր 'ւ ոռմբ ու *գուրգով* զհետ իրաց // Հիմի այլ չկայ տիպ, ոչ տես պատկերաց (212): **Դովլաթ//տովլաթ** (արաբ.)՝ ունեցվածք, հարստություն: Առնու շատ *դովլաթ*, թէ հզոր է անյաղթ (211): **Խազինայ** (արաբ.)՝ գանձ: Ես եմ աման հողէ 'ւ ի յիս լըցած կայ *խազինայ* (188): **Խօն** (պարսկ.)՝ խոնչա, սեղան: Իրենց փռեն գեղեցիկ *խօն* (121): **Թաճ** (պարսկ.)՝ թագ: **Ջառ** (պարսկ.)՝ ոսկի: Ունէր *թաճ* ականքք ու իր կար թախթ ի *զառ* (211): **Կուլպաշաքար** (պարսկ.)՝ վարդի շաքարակալած ծաղկաթերթեր: Ու զուգեն *կուլպաշաքար* // Ես դեղ լինիմ սրտացալին (144): **Մալ** (արաբ., պարսկ.)՝ կայք, ունեցվածք: Մի՛ պարծենալ դու ի քենէ, թէ ես գանձուց տէր եւ *մալի* (207): **Մահաք** (արաբ., պարսկ.)՝ փորձաքար: Կամ *մահաքին* համար ի յերկու գոյն ինքըն բացուի (197): **Ջօհար//ճոհար** (արաբ., պարսկ.)՝ գոհար: Որ նըման խամ ապիկու յաժան ձըգեն անգին *ջօհար* (201): **Շարպաթ** (պարսկ., արաբ.)՝ օշարակ: Թէ եփեն զիս կրակով, // *Շարպաթ* շինեն ի շուկանին (144): **Սայվան** (պարսկ.)՝ փոքր հովանոց, վրան: Ջարնեն ցեղ ու ցեղ *սայվան* (153): **Սլէհ//սլեհ** (արաբ., պարսկ.)՝ զենք: Ես եմ առանց *սլէհ* ու մերկ եմ յանդիման կանգնել (183): **Քան** (պարսկ.)՝ հանքախորշ: Ասես, թէ՛ *քան* ունիմ (177): **Տօսփօքան//տօսփօքանէ** (պարսկ., թուրք.)՝ մեծ գավաթ: Սաղի՛, լի՛ց ու տու՛ր զկթղայն, // Որ ես խմեմ *տօսփօքան* (155): **Փոլապ** (պարսկ.)՝ պողպատ: Ջհամբերելն ի հետ պահէ զերդ հըրեղէն թուր մի *փոլապ* (185):

Դ) **Բժշկություն, դեղորայք՝ քիմար** (պարսկ.)՝ հիվանդ: Անուշ պարարին, գերդ գանասուն յիմար, // 'Խ ներքեի ցավով կան ի լի 'ւ քիմար (210): **Մայջուն/մաճուն** (պարսկ., թուրք.)՝ դեղախյուս՝ պատրաստված մեղրով ու շաքարով (123): **Մայջուն** եղայ ու վարդէջուր (123): **Հաքիմ // հէքիմ** (արաբ.)՝ բժիշկ: Քաղեն զիս եւ տանին, // Շաքրով խառնեն այն *հաքըմնին* (144):

Ե) **Զգայական ընկալումներ, վիճակ, հատկանիշ, արտաքին տեսքը բնութագրող բառեր, գույներ՝ ալանի** (արաբ.)՝ բացահայտ, հայտնի: Ի մէկ տեղ ուր բոզ ու շունըն հանդիպի, // Հօն չասեն զբոզութեան բանն *ալանի* (218): **Քասար** (արաբ.)՝ գիտություն, խելք, իմաստություն: Այսօր առ քեզ են հաւասար//Զինչ որ մեզ խելք կայ եւ *բասար*¹ (132): **Քէխապար**²(պարսկ.)՝ անտեղյակ: **Քէվայֆայ// քէվաֆա//պէօֆա**³(արաբ., պարսկ.)՝ անհավատալի, անվստահելի: Իմ աղբարն է *քէվայֆայ*, որ ինք չունի իսկի հաւատ (184): **Քէսիֆաթ** (պարսկ., արաբ.)՝ տգեղ: **Սուրաթ** (արաբ., պարսկ.)՝ դեմք, կերպարանք: Զի *սուրաթէ* են *քէսիֆաթ*, կան կենդանի ու չեն հոգով (169): **Լուրֆ** (արաբ.)՝ ողորմածություն, բարերարություն: Զոր *լուրվի* ժամ գայ շահի հետ քեզ կենայ զօրն ի մուրատ (186): **Ղալա** (արաբ., պարսկ.)՝ կեղծ, խարդախ: Կամ մաղրիպի ոսկին որ մահաքովն *ղալա* լինի (196): **Ղիմաթ** (պարսկ.)՝ գին, արժեք, հարգ: Եւ անգէտ խօսքն ի յանգէտ մարդիքն ի մօտ է *ղիմաթով* (170): **Մազապ** (արաբ.)՝ խաղալիք⁴: **Ղուսայ** (արաբ., պարսկ., թուրք.)՝ տրտմություն, թախիծ: Որ չըլինիս հաքր աստենիս, որ չարնէ զօրն ըզքեզ *մազապ*, // Է~ անմիտ մարդ ու հիմար, է՞ր կու մաշիս զօրն ի *ղուսապ* (186): **Անգուման** (պարսկ.)՝ անկասկած: Երթաս *անգուման*⁵ նստիս, // Զի գիտե՞ս քո աշըխ եմ ես (160): **Ղասսրան//դէսսրան//տասսրան** (պարսկ.)՝ հեքիաթ, պատմություն: Եկայք մտնունք ի բաղչայն, // Խօսիմ ես հազար *ղասսրան* (154): **Զախմել** (պարսկ.)՝ *զախմ* խոց, վերք)՝ վիրավորել: Ուներդ աղեղունք լարես, // Գաղտուկ նետերով *զախմես* (154): **Զանախ** (պարսկ.)՝ դատարկաբանություն: Նա սըրտովն *զանախ* է, ծաղր ու ծանակ (217): **Էղթիար** (պարսկ.)՝ իրավունք, իրավասություն: Գլովիք լինին շատոնց, անուն եղել իր *էղթիար* (200): **Թամամ**⁶(արաբ.)՝ լրիվ, ամբողջ, կատարյալ: Լուսին սուրաթով լուս ես, // Պատրես ու

¹ Արաբերենում այս բառն առաջին հերթին թարգմանվում է *աչք*, *տեսողություն*:

² -Քէ +խապար՝ լուր. -*քէ//պէ*՝ պարսկերեն նախածանցը համագոր է հայերեն-*ան* ժխտական ածանցին:

³ -Քէ +*վայֆայ*՝ *հավապ*:

⁴ Ա. Սրապյանի թարգմանությունն է *խաղալիք*, մինչդեռ ՄՀԲ-ում թարգմանված է *ներհակ*, *հակառակ* (տե՛ս Կ. Երզնկացի, Տաղեր, էջ 288, ՄՀԲ, էջ 481:

⁵ -*Ան* ժխտական նախածանց + *գուման*՝ *կասկած*:

⁶ ՄՀԲ-ում այս բառը համարվում է արաբական փոխառություն, իսկ ըստ Հ. Աճառյանի՝ այն թուրքերենից է փոխառյալ (տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, ՄՀԲ, էջ 233: Հ. Աճառյան, Թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ՝ համեմատութեամբ,

թամամ ելնես (160): **Լափիֆ** (արաբ., պարսկ.)՝ նուրբ, քնքուշ, մեղմ: Դու աճապ քաղցր ու լափիֆ ես խօսելով (167): **Խալաս** (արաբ.)՝ մաքուր, անխառն, բնական: Ով է խալաս ոսկի, նա ի հըրոյն յինչ երկընչի (197): **Խամ** (պարսկ.)՝ հում, անմշակ: Որ նըման խամ ապիկու յաժան ձըգեն անգին ջօհար(201): **Խայալ** (արաբ., պարսկ.)՝ երևակայություն, ցնորք, միտք: Երազ է խաբող եւ խայալ անցաւոր(210): **Հաղիղաթ//հաղիաթ** (արաբ.)՝ ճշմարտություն: Ո՛վ ընկեր, ի քո սիրուդ բանտ ի զնտան, // Հաղիղաթ եւ անմահութեանդ է նա տես(167): **Ղահր** (արաբ., թուրք.)՝ վիրավորանք: Բայց ղահրի, քեզ չէ՛ հարիֆ (187): **Թէզ** (պարսկ.)՝ շուտ: **Հաճաթ** (արաբ.)՝ պատրվակ, պատճառ: Թէ հազար խիստ է սիրուն՝ թէզ բաժնելու խնդրէ **հաճաթ** (186): **Հայրան** (արաբ., պարսկ.)՝ ապշած, զարմացած: Առջեւ աչերուս քայլես, // Ես խեւ ու **հայրան**՝ հետ քեզ (160): **Հասրաթ** (արաբ., պարսկ., թուրք.)՝ կարոտ, փափագ, իղձ, տենչանք: Ու ամէն հաւ սէր ունի ու շատ **հասրաթ** ի յիր սրտին (138): **Հարամ** (արաբ.)՝ ապօրինի, պիղծ, նզովյալ: Յանամօթ մարդուն ուտել հացն է **հարամ** (218): **Մասսրան//մէսրան** (պարսկ.)՝ արբած, գինով: Մէճլիս զուգեմ ի սայրան, // Բլբուն է ներս ի **մասսրան** (155): **Նախշիդէուար** (պարսկ.)՝ շվարած, զարմացած, շփոթված: Սուրաթ են բէսիֆաթ և յանդիման **նախշիդէուար** (201): **Նաղր** (արաբ., պարսկ.)՝ կանխիկ, առձեռն: Է՛ անմիտ, երբ դու չունիս քեզիկ բաժին իրք **նաղըրով** (173): **Պէումէպ**¹ (պարսկ.)՝ անհույս: Թէ զիս **պէումէպ** թողուս, չաւտամ թէ այլ զիս տեսնուս (162): **Ռաւշան //ռօշան** (պարսկ.)՝ պարզ, հստակ, ջինջ, պայծառ: Որժամ խմեմ զլի շիշան //Նռան գունով զգինին **ռաւշան** (165): **Սարխօշ** (պարսկ.)՝ հարբած, գինով: **Սարխօշ** եմ յայն սիրուն (191): **Սէքին** (արաբ., թուրք., պարսկ.)՝ հեզ, հանդարտ, հանգիստ: Ու թէ չունիս խոնարհութիւնն ու **սէքին** սիրտ եւ հեզ հոգի (208): **Սիահ** (պարսկ.)՝ սև, սևագույն, սևաթուր: Չնա երբ ի խաղ տեսնում սագով, // Լուսին սուրաթ, **սիահ** մագով//Ես իւր դէմն ելնեմ սագով(165): **Սիֆաթ** (արաբ., թուրք.)՝ երես, դեմք, կերպարանք: **Սիֆաթին** արա մըտիկ, որ է խորին անգիտելի(198): **Շափի** (պարսկ.)՝ ուրախություն, խնդություն: Այսօր խօսէ՛ զինչ քեզ պիտի, // Չի է խընդման օր եւ **շափի** (133): **Շիրին** (պարսկ.)՝ քաղցր, անուշ: **Փարդայ** (պարսկ.)՝ ձայնի եղանակ, տոն: Շրթունքն բերէ **զփարդան**, // ' Ի իւր լեզուն խօսի լարման, // Քաղցր է ու **շիրին** իւր ձայն, // Այն որ մեզ շաքրի համ տան (156): **Պահրէ** (պարսկ.)՝ 1.շահ,օգուտ, 2.վայելք, հաճույք: Քո սէրըտ թամամ **պահրէ** (158): **Քուշապ** (պարսկ.)՝ զվարճություն: Չի ճանչել զվատըն յաղէկէն, ի հետ ոմանց առնէ **քուշապ** (185):

Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 117):

¹ -Պէ (բէ) +ումէպ՝ հույս:

2) **Մարդիկ, մարդկային հարաբերություններ, բնակավայրեր, ազգություն, զբաղմունք՝ գանգալի** (պարսկ.)՝ կատակաբան: Էին սուրաթով զերդ լուսին ցանկալի, //Սրտով խիստ ուրախ ու խօսօք **գանգալի** (212): **Գունահքար** (պարսկ.)՝ մեղավոր, հանցավոր: Ասցի. ես **գունահքար**, դու թագաւոր, քեզիկ մեղայ (189): **Հայվան** (արաբ.)՝ տխմար, անասուն: Ով չեւնէ սիրու զնտան, // Ու չէ կեցեր զինք **հայվան** (154): **Խար//եար** (պարսկ.)՝ սիրուհի: Ոչ ունիմ ես օգնական յոյս 'ւ ապաւեն ինձ կամ **խար** (192): **Թարպիր//թարպիր** (արաբ.)՝ խորհուրդ, կարգավորություն: Դարձիր ի յետ նայէ ու գիտ խելօք **թարպիր** ու ճար (203): **Ղաղար//ղալար** (պարսկ., թուրք., արաբ.)՝ թերություն, պակասություն: **Ջումլայ** (արաբ., պարսկ., թուրք.)՝ ամբողջությամբ: Նա թըվի իմ հոգոյ խօսքն ի յիր սըրտին **ջումլայ ղաղար** (185): **Հուրմ** (արաբ., պարսկ., թուրք.)՝ հրաման, վճիռ: Այսօր եմ **հուրմով** իշխան(154): **Ճէհել//ջահիլ** (արաբ., պարսկ.)՝ ջահել, անտեղյակ: **Մուրթար** (պարսկ.)՝ ուխտադրուժ, ուրացող: Անգիտաց ինքն է ծանօթ, ով **ճէհել** է ու կամ **մուրթար** (185): **Ղաւար** (արաբ.)՝ կավատ: Ով երեսօք զըրուց անէ ի մեր միջիս՝ ինքն է **ղաւար** (184): **Հարիֆ** (արաբ.) ընկեր: **Յարպ** (թերևս թուրք.)՝ մեջք, թիկունք, փխբ.՝ օգնություն: Շատոց խափանի **յարպ** ու տապլ ու յալամ (212): **Մէճլիս** (արաբ., պարսկ., թուրք.)՝ հանդես, հավաքույթ: **Սայրան** (արաբ., պարսկ.)՝ զբոսավայր: **Մէճլիս** զուգեմ ի **սայրան**, // Բլբուլն է ներս ի **մասրան** (155): **Շաքարֆըրուշ** (պարսկ.)՝ շաքարավաճառ: Քաղցր է բլբուլ ձայնդ ու անուշ, և մեզ նըստել **շաքարֆըրուշ** (133): **Ջալար** (արաբ.)՝ դահիճ, փխբ. անողորք մարդասպան: Իր լեզուովն քաղցր շաքար ու սրտովն է զերդ **զջալար**(185): **Ջամիաթ** (արաբ., պարսկ.)՝ 1. բնակչություն, մարդիկ, 2.ամբոխ, բազմություն: Նստեալ է սաղի սա ի մեծ **ջամիաթ** (210): **Սաղի** (պարսկ.)՝ մատովակ, գինեմատակարար: **Սուլթան//սուլթան** (արաբ.)՝ միապետ, թագավոր: **Սաղի** է մեզի զօրհան, // Վարդն է մեզ **հարիֆ սուլթան** (157): **Սավրայի//սաւդայի** (արաբ., պարսկ.)՝ սիրուց խելագարված: Եմ յիմար դարձել ու խն ու սավդայի՝ ի շուրջ գալով(169): **Սաւրակ** (արաբ., պարսկ.)՝ պարզ, մաքուր, անխառն: Նա չարկամ զիս տեսանէ, ինձ պացխուն տայ խօսվի **սաւրակ** (185): **Սնիկ** (ասոր.)՝ պետք, կարիք, կարոտություն: Ով ունի կին շընացող կամ պոռնիկ, //Հանց որ ինք ի յայլոց այր երթայ **սընիկ** (217): **Փասպան** (պարսկ.)՝ պահապան: Կանգնել սուրաթիդ **փասպան**, // Վախեմ թէ խոցես մահուան (156): **Քիպր** (արաբ.)՝ գոռոզություն, մեծամտություն: **Ջավր/ջաւր/ճօր** (արաբ., պարսկ.)՝ ուժ, բռնություն, ճնշում, հարկադրանք: **Ջաֆայ** (արաբ., պարսկ.)՝ զրկանք, նեղություն, չարչարանք, տանջանք: Լռել է իր շատ **քիպր** ու **ջավր** ու **ջաֆան** (211): **Ֆարման** (պարսկ.)՝ հրաման: Հրաման ունին եւ **ֆարման**, //Վարդին երեսան թող գան (154):

է) **Ֆիզիկական տարբեր գործողություններ, արվեստ և արհեստ՝ մտքույ** (արաբ., պարսկ.)՝ նվագածու, երգիչ: Մոյտան//մայտան(արաբ., պարսկ., թուրք.)՝ հրապարակ, պարահրապարակ: **Չաշթայ** (պարսկ., թուրք.)՝ երաժշտական վեցլարյա գործիք: **Սազել** (պարսկ.)՝ երաժշտական գործիքը լարել: **Մըտրուպ**, դու սազէ՛ *զչաշթայն*, //Որ մորճն խաղայ *մոյտան* (156): **Պապրել** (արաբ., պարսկ.)՝ լրել, բոլորել, լրում առնել: Լուսին սուրաթով լուս ես, պատրես ու թամամ ելնես (160): **Նախշինիզար** (պարսկ.)՝ նախշանկար: Այն որ տուն ունէր զարդարած և տաճար//Շինած ամէնն ոսկով ու *նախշինիզար*(211): **Քէմիագար** (պարսկ.)՝ ալքիմիկոս: Խելօքըտ լեր դու՛ այլ խիկար *քէմիագար* գանձուց մեծի (208): **Ֆէլ/Ֆել** (արաբ., պարսկ.)՝ արարք, հնարք: Թէ քանի կըտրիճ աղէկ բոզն է խաբել, // Ու վանց իր շատ *ֆելերուն* զինք կորուսել(218):

Ը) **Քանակ, թիվ, դերանուն՝ բէշըմար** (պարսկ.)՝ անթիվ, անհամար: Ունին գանձ անթիւ ու հեծել *բէշըմար* (211): **Պէհիսապ**² (պարսկ.)՝ անթիվ, անհամար: Դու սուլթան ես *պէհիսապ* շատ ծառանով (166): **Ջումլայ** (արաբ.)՝ ամբողջը, բոլորը: Նա թըւի իմ հոգոյ խօսքն ի յիր սըրտին *ջումլայ* դադատ (185):

Այլ բառեր՝ աճապ (արաբ.)՝ արդյոք: Դու *աճապ* քաղցր ու լատի՞ֆ ես խօսելով (167): **Ջէրայ/զէրէ** (պարսկ.)՝ *որովհետև, քանի որ*: Քեզի ծառայ է լել կամով՝ // *Ջերայ* քենով ինք ի կենդան(132): **Սաապ** (պարսկ.)՝ պատճեն: Չաշխարհիս զամէն գնացք ես ցուցանեմ զերդ *զսաապ* (185):

Միջնադարյան տաղերգության մեջ կան արաբերենից, թուրքերենից, պարսկերենից փոխառյալ հարադիրներով կազմված բազմաթիվ հարադիր բայեր, որոնց մեծ մասը այնպիսի առատությամբ է ներմուծվել գրավոր աղբյուրների միջոցով, որ ստացել է ընդհանուր գործածություն՝ աստիճանաբար ձուլվելով մեր լեզվին: Կ. Երզնկացու լեզվին հատուկ են օտարաբառ բայական հարադրությունները, որոնք հիմնականում նորակազմ միավորներ են, և որոնցից շատերը զուգահեռաբար ունեն համապատասխան համադրական ձևեր: Սրանք կարող են դիտվել որպես խոսակցական լեզվի, ինչպես նաև բարբառային միավորներ՝ **եսսիր լինել**՝ ստրուկ, գերի լինել, **հաքր ընգնել**՝ արհամարհվել և այլն: Բերված օրինակներից երևում է, որ նորակերտ հարադրական բայերից ամենատարածվածը *գոյական + բայ* կաղապարով հարադրություններն են, որտեղ օտարակազմ հարադրավոր բայերի հարադիրն արտահայտում է տվյալ կառույցի հիմնական իմաստը: Օտարաբառ հարադիրը, հայերենին անցնելով նախ հարադրավոր բայ կերտելու և ինչ-որ հասկացություն արտահայտելու համար, հետագա գործածությամբ մերվել է լեզվին, կազմել նոր բաղադրություններ և

¹ Ա. Սրայյանը թարգմանել է «անառակ գործ»:

² -Պէ (*բէ*) + *հիսապ*՝ *հաշիվ*:

ստացել ընդհանուր գործածություն: Որպես կանոն՝ հարադիրները հանդես են գալիս անփոփոխ, իսկ բայական բաղադրիչը խոնարհվում է: Տաղերում գործածված են գոյական և ածական հարադիրներ: Սրանք բանաստեղծական տողերին հաղորդում են կենդանություն, շարժում:

Կ. Երզնկացու տաղերում մենք առանձնացրել ենք հետևյալ օտարաբառ հարադիրությունները.

Ազար (պարսկ.) **լինել**՝ նեղանալ, վշտանալ: Նա օտարին ի՞նչ մեղ դնեմ, //Երբ որ *լինին* յիրմէն *ազար* (193):

Անդիշայ (պարսկ.) **լինել**՝ հոգս անել, մտածել: Դու է՞ր *կաս յանդիշայ* (197):

Անդալար¹ (պարսկ., թուրք., արաբ.) **դառնալ**՝ անկեղծանալ: Ոչ օտար մարդն ի հետ քեզ մէկ *դառնայ* հանց *անդալար* (186):

Բէդար (պարսկ.) **կենալ**՝ արթուն, զգաստ մնալ: Յերակ արթուն կացիր ի յաշխարհիս, *բէդար կացիր* (198):

Եասիր (արաբ.) **լինել**՝ ստրուկ, գերի լինել: *Եասիր կամ* ծառայ՝ զինքն ազատես (168):

Հաքր (պարսկ., թուրք.) **ընգնել**՝ արհամարհվել: Մէջ անգիտաց *հաքր եմ ընգել* (122):

Հաքր լինել՝ արհամարհվել: Որ *չըլինիս հաքր* աստենիս, որ չարնէ զօրն ըզքեզ մազատ(186):

Խեւ (քրդերեն՝ *խենթ*) **լինել**՝ խենթանալ: Առաւօտէ մինչ իրիկուն//*Խեւ էր եղել* վասն հոտուն(135):

Թուրուշ (պարսկ.) **ունենալ**՝ դառնացած լինել, նեղանալ: Զինչ սիրտ նեղած կայ եւ *թուրուշ* առ քեզ *ունիս* յուրախութեան (132):

Թաքար (արաբ.) **կենալ**՝ խոկալ, մտածել: Կամ վանց այս սուտ կենցաղոյս քանի *կենաս* դուն *թաքար* (193):

Ղապուլ (արաբ., պարսկ.) **առնել**՝ ընդունել, հանդուրժել: Զայս բանքս ի Կոստանդեայ *ղապուլ արա...* (199):

Ղաֆիլ (արաբ., պարսկ.) **լինել**՝ անհոգ, անտարբեր լինել: Է՞ր *ղաֆիլ կաս* յաշխարհիս(193):

Ֆըրիաթ (պարսկ., թուրք.) **կանչել**՝ ողբալ, աղաղակել: *Ֆըրիաթ կանչեմ* հազար ՚ւ ահեղ հառաչ բերեմ լալով (169):

Կ. Երզնկացու տաղերում հանդիպող անվանական հարադիրությունները շաղկապական են՝ փոխառյալ բառերի հարադրմամբ:

¹ *Ղալար/խալար*՝ թերություն (-ան ժխտական ածանց + *ղալար*)

Ջէր ու զապար (պարսկ.)՝ վերուվար, դետուդեն: Շուտով յայն փառացն եղեն **զէր ու զապար** (211):

Լութֆ (ողորմածություն) **ու քարամ/քերէմ** (արաբ.)՝ ազնվություն, վեհանձնություն: **Ջերայ** ի լըրբէն չելնէ **լութֆ ու քարամ** (218):

Ջավր ու ջաֆան (արաբ., պարսկ.)՝ զրկանք ու բռնություն: Լռել է իր շատ քիպր ու **ջավր ու ջաֆան** (211):

Որոշ բառերի ծագումն անհայտ է, ինչպես՝ **ուսկայ**¹ այժմ, **շնոֆոր**² շնորհալի:

Ամփոփելով նշենք, որ յուրաքանչյուր հեղինակ իր ստեղծագործության մեջ ներկայացնում է լեզվի պատմական զարգացման տվյալ շրջանի վիճակը: Այս իմաստով Կ. Երզնկացու բանաստեղծությունը մի ամբողջ քայլ առաջ էր միջնադարյան գրականության բնագավառում: Նրա տաղերի լեզուն հարուստ է դարեր շարունակ հայերենում գործածվող զանազան ոլորտների վերաբերող փոխառություններով, որոնցից շատերը արձագանքն են իր ժամանակաշրջանի հայերենի մտածողության և անդրադարձումը լեզվական իրողությունների, և վստահաբար կարելի է ասել, որ փոխառությունների այսքան առատ դրսևորումները, ժողովրդախոսակցական բառաձևերի գործածությունը հեղինակի տաղերի յուրահատուկ առանձնահատկությունն են: Փոխառյալ բառերի քննությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու հայերեն բառի փոխառյալ հոմանիշը, այլև փոխառյալ բազմաթիվ հոմանիշ բառերի գործածությունները, որոնք թաքցնում են Հայաստանի աշխարհագրական դիրքով, մեր ժողովրդի պատմական ճակատագրով պայմանավորված լեզվական լայն փոխազդեցություններ¹: Փոխառյալ բառերի քննությունն ու արժևորումը նպաստում են տվյալ ժողովրդի, հետևապես և նրա լեզվի պատմության առանձին հարցերի բացահայտմանն ու պարզաբանմանը և փաստական կարևոր նյութ են ազգի, ժողովրդի պատմությունը ճիշտ ուրվագծելու, ներկայացնելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Ե., 1960:
2. Հ. Աճառյան, Թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ՝ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն, Մոսկուա-Վաղարշապատ, 1902:
3. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Ե., 1926:
4. Սահակ վարդապետ Ամատունի, Հայոց բառ ու բան, Ե., 1912:

¹ Ն. Հովհաննիսյան, Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն որպես վաղ աշխարհաբարի արտահայտություն, Հայոց լեզվի պատմության հարցեր, Եր., 1991, 3, էջ 115:

5. Գ. Աւետիքեան, Հ. Սիրմելեան, Մ. Աւգերեան, Նոր հայկազեան բառարան(ՆՀԲ), հ. 1, Ե., 1979, հ. 2, Ե., 1981:
6. Կ. Երզնկացի, Տաղեր, Եր., 1962:
7. Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (ՄՀԲ), Ե., 2009:
8. Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Ե., 2001:
9. Ս. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան (ՀԲԲ), Ե., 1944:
10. Ն. Հովհաննիսյան, Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն որպէս վաղ աշխարհաբարի արտահայտություն, Հայոց լեզվի պատմության հարցեր, Ե., 1991:
11. Մ. Պոտուրյան, Կոստանդին Երզնկացի ԺԴ դարու բանաստեղծ և յուր քերթվածները, Վենետիկ, 1905:
12. Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
13. Брюсов В., Поэзия Армении, Москва, 1916:

BORROWINGS IN K. YERZNKATSI'S POEMS

GRIGORYAN SUSANNA

PhD in Philological Sciences, Associate Professor, YSU

e-mail: susannagrigoryan@ysu.am

PARONYAN NAIRA

PhD in Philological Sciences, Associate Professor, YSU

e-mail: nairaparonyan@ysu.am

The vocabulary of Middle Armenian, being rich in narrow-dialectical words, during its development was constantly replenished and enriched with borrowings, reflecting the changes taking place in the life of Armenians. Thanks to Armenian's cultural, political and commercial relations with other peoples, this period was enriched with borrowings related to various phenomena, which, penetrating the literary language and dialects, were rooted in our language.

The purpose of the given article is to study loan words used by K. Yerznkatsi, to reveal their use and highlight their semantic features. Borrowings used in K. Yerznkatsi's language refer to various fields. Our examination revealed that loanwords and the number of components expressing characteristics, situations, state, human relations prevail in our choice. Each author presents in his work the state of the given period of the historical development of the language. In this sense, K. Yerznkatsi's poem was a whole step forward in the field of Medieval literature. The language of his verses is rich in borrowings used in Armenian related to various fields for centuries,

many of which are a response to the Armenian thinking of his time and a reflection of linguistic realities, and it can be claimed for sure that such abundant manifestations of borrowings and the use of folk speech forms are unique features of the author's verses.

Keywords: *K. Yerznaktsi, singer of nature and love, borrowings, loan language, semantic groups, vocabulary, component, Middle Armenian, literary language, dialects.*

ЗАИМСТВОВАНИЯ В СТИХАХ К. ЕРЗНКАЦИ

ГРИГОРЯН СУСАННА

Кандидат филологических наук, доцент

Преподаватель ЕГУ

Электронная почта: susannagrigoryan@ysu.am

ПАРОНЯН НАИРА

Кандидат филологических наук, доцент

Преподаватель ЕГУ

Электронная почта: nairaparonyan@ysu.am

Лексика среднеармянского языка, будучи богатой узкодialeктными словами, в процессе своего развития всегда дополнялась и обогащалась заимствованиями, отражающими изменения, происходящие в жизни армянского народа. Благодаря культурным, политическим и торговым связям армянского народа с другими народами, этот период обогатился связанными с различными явлениями заимствованиями, которые, проникая через литературный язык и диалекты, укрепились в нашем языке. Целью данной статьи является изучение заимствований, используемых К. Ерзнкаци, выявление специфики их использования и семантических особенностей. Заимствования в языке К. Ерзнкаци охватывают широкий спектр областей. Наше исследование показало, что в нашей выборке превышает количество заимствованных слов и компонентов, выражающих качество, состояние, человеческие отношения. Каждый автор в своем произведении представляет состояние исторического развития языка определенного периода. В этом смысле стихи Ерзнкаци были шагом вперед в области средневековой литературы. Язык его стихов богат заимствованиями из различных областей, использовавшихся в армянском языке

на протяжении столетий, многие из которых являются отражением армянского образа мышления его времени, отражением языковых реалий.

Ключевые слова: *К. Ерзнкаци, певец природы и любви, заимствования, язык-источник, семантические группы, лексика, компонент, среднеармянский язык, литературный язык, диалекты.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 26.04.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 13.05.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: